ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2015 թվականի N 1118-Ն

ԳԵՐԱԿԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐԸ, ՀՈՒՄՔԸ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԸ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բովանդակություն

1. Ո՞վ կարող է դիմել, նախապայմաններ:

2. Ինչպե՞ս կազմել հայտը

3. Ինչպիսի՞ն է հայտի քննարկման/գնահատման ընթացակարգը (գնահատման կարգ, ժամկետներ, մերժման հիմքեր)

Նախապայմաններ

Ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունը նախատեսված է այն ներդրումային ծրագրերի համար

- որոնք իրականացվում են գերակա ոլորտում.
- որոնց շրջանակներում ներմուծված տեխնոլոգիական սարքավորումները հումքը և նյութերը չեն արտադրվում ԵԱՏՄ անդամ երկրներում:
- որոնց շրջանակներում ներմուծված տեխնոլոգիական սարքավորումները և (կամ) հումքն ու նյութերը կկիրառվեն բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում.

Ինչպես կազմել հայտը

Հայտը պետք է ներառի՝

- ներդրումային ծրագիր
- տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի և (կամ) հումքի ու նյութերի ցանկ և դրանց տեխնիկական բնութագիր
- հայտարարություն՝ ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը և (կամ) հումքն ու նյութերը բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու մասին

Ներդրումային ծրագիր

Ներդրումային ծրագրում ընդգրկված տեղեկատվությունը հիմնականում ներառում է.

- ծրագրով նախատեսված արտադրատեսակը, տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի կիրառման նկարագրությունը
- ծրագրով նախատեսված արտադրանքի ծավալները (փաստացի կամ կանխատեսվող)
- ծրագրով նախատեսված արտադրանքի իրացման ծավալները
- ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված կամ կանխատեսվող ներդրումները
- ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի ԵԱՏՄ անդամ երկրներում չարտադրվելու (կամ ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով արտադրվելու) կամ ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկատվությունը

Ինչպիսին է հայտի դիտարկման ընթացակարգը



Հայտի քննարկման/գնահատման ընթացակարգը

- հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ

- Հայտը 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ուղարկվում է ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ համապատասխան ոլորտային նախարարություն (նախարարություններ)՝ կարծիքի և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ եզրակացության:

- ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ համապատասխան ոլորտային նախարարությունը (նախարարությունները) 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված հայտը և տրամադրում են իրենց կարծիքը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 7 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված հայտը, պատրաստում է եզրակացություն՝ ամփոփելով ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ համապատասխան ոլորտային նախարարության կարծիքները, և այն ներկայացնում է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Հայտի քննարկման/գնահատման ընթացակարգը

- Եզրակացությունը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ուղարկվում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ կարծիքի:

- ՀՀ կառավարությունը քննության է առնում եզրակացությունն ու դրա վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կարծիքը և 20 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում հայտի բավարարման կամ մերժման մասին:

առավելագույնը 35-40 աշխատանքային օր

- *Հայտը մերժելու հիմք է հայտին ներկայացվող պահանջներին անհամապատասխանությունը, ինչպես նաև սույն կարգի հայտով նախատեսված տեղեկատվության հիման վրա կազմված եզրակացությունը:*

Ինչ է հաշվի առնվում հայտի քննարկման/գնահատման ընթացքում

- ներդրումային ծրագիրն իրականացվում է գերակա ոլորտում.
- ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը և (կամ) հումքն ու նյութերը կկիրառվեն բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում.
- ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով) կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին.
- ներդրումների ծավալը, արտադրված արտադրատեսակը, իրացման ծավալները, իրացման ուղղությունները, ստեղծված նոր աշխատատեղերը:

Ուշադրություն

- Հայտատուն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված տեղեկությունների հավաստիության համար

- Ներդրումային ծրագրերի շրջանակներում համապատասխան արտոնություն ստացած անձը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում ծրագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն տարեկան կտրվածքով՝ մինչև ներդրումային ծրագրի ժամկետի ավարտը

Շնորհակալություն

Ներդրումային քաղաքականության վարչություն

(+374 11) 597 127

investment@mineconomy.am